

---

## ՄԱՐԳԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

### ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարգպանական Հայաստանի պատմության հարցի քննությունը հայոց պատմության ուսումնասիրության անբաժանելի մասն է, և այդ պատճառով այն գտնվել է պատմաբանների ուշադրության կենտրոնում: Չնայած կատարված աշխատանքին և առկա գրականությանը՝ Մարգպանական Հայաստանի պատմության շատ հարցեր դեռ քննության կարիք ունեն: Օրինակ՝ սահմանների հարցը, որի ուսումնասիրությանն է նվիրված ներկա աշխատանքը:

Մարգպանական Հայաստանի պատմությունն ընդգրկում է բավականին մեծ ժամանակահատված: Այն սկսվում է Արշակունյաց արքայատոհմի անկմամբ (428 թ.) և հասնում մինչև արաբական առաջին արշավանքների (640 թ.) ժամանակները: Ավելի քան երկու դար տևող պատմական այս ժամանակաշրջանում Մարգպանական Հայաստանի սահմաններն անփոփոխ չեն եղել: Շատ նահանգներ կամ գավառներ անջատվել են Հայաստանից և կցվել հարևան երկրներին կամ երկրամասերին: Պատճառն այն էր, որ Մեծ Հայքի թագավորությանը հարևան Հռոմեական կայսրությունը (այնուհետև Բյուզանդիա) և Պարսկաստանը գտնում էին, որ իրենց միջև ընկած է հզոր ու հարուստ թագավորություն: Լավ կլինի, որ իրենք թուլացնեն այս թագավորությունը. նախ երկու մասի բաժանեն երկու Արշակունի թագավորներով, հետո կաշխատեն նրանց էլ թուլացնել, աղքատացնել և իրենց ծառայությանը ենթարկել, որպեսզի չկարողանան գլուխ բարձրացնել<sup>1</sup>:

Թեև նշված տեղեկությունը վերաբերում է 387 թ., երբ Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց երկու մասի, բայց Հայաստանը թուլացնելու նման քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում, քանի որ հայկական երկու թագավորություններից էլ, ինչպես նշում է Փավստոս Բուզանդը, շատ գավառներ խուզվեցին, կտրվեցին և իրենց տարածքներից փոքր մասեր մնացին երկու թագավորներին<sup>2</sup>:

Հաջորդ քայլը թագավորությունների վերացումն էր, որը տեղի ունեցավ նախ Հայաստանի արևմտյան մասում, ապա արևելյան կամ պարսկական հատվածում:

Եթե արևմտյան մասում թագավորության վերացումը հռոմեական կայսրերի վարած քաղաքականության հետևանք էր, ապա արևելյան հատվածում Արշակունյաց թագավորության վերացմանը նպաստեց ոչ միայն պարսից արքունիքի վարած քաղաքականությունը, այլև հայ նախարարների դիրքորոշումն այդ հարցում: Վերջիններս գտնում էին, որ Արտաշիր Արշակունու մասին պետք է «չարախօսել առ արքային Պար-

---

<sup>1</sup> Տե՛ս «Փավստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, 6-Ա:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

սից, և ի բաց ընկենուլ զթագաւորն իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս»<sup>3</sup>: Ի պատասխան դրան՝ «Յրամայեաց Վռան առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշրէ և անդէն արգելուլ զնա, և զամենայն ինչս ազգի նորա ունել յարքունիս» (Խոր., Գ-ԿԴ), իսկ «Մեծապարզ և զնախարարսն արծակեաց պարսիկ մարզպանաւ, որուն անուն էր Վեհմիհրշապուհ» (Խոր., Գ-ԿԴ):

Հայաստանի պարսկական մասուն մարզպանական կառավարում իրականացնելու սկզբուն Հայաստանի սահմանները ավելի ընդարձակ էին, քան հետագայում: Այս ժամանակ նրա արևելյան սահմանները հասնում էին մինչև Կասպից ծովի ափերը՝ ընդգրկելով Արցախ, Ուտիք և Փայտակարան աշխարհները: Այս են վկայում «Գահնամակի» տեղեկութիւնները, ըստ որի՝ նախարարների ցուցակում «ԻԳ. Գարդմանաց տեր»-ն է, իսկ Գարդմանը Ուտիքի գավառներից էր, և «Թ. Կասպէից տեր»-ը<sup>4</sup>: Փավստոս Բուզանդի վկայությամբ էլ նույնացվում են Կասպից երկիրն ու Փայտակարան աշխարհը (Բուզ., 5-ԺԴ):

Առաջնորդվելով իր քաղաքական նպատակներով՝ պարսից արքունիքն աստիճանաբար կրճատում էր այս սահմանները, և արդյունքում արդեն 450-451 թթ. դեպքերի ժամանակ Ուտիքը դուրս է մնում Հայոց մարզպանության սահմաններից:

Այն արդեն միացված էր Աղվանքին, քանի որ ստորև բերվող տեղեկության մեջ Ուտիքը չի հիշատակվում, այլ նշվում է Արցախ և անմիջապես Աղվանք: Այսպես, Վասակը «Սոյնպես առնէր ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց»<sup>5</sup>:

Ուտիքի՝ Աղվանքի կազմում այս ժամանակ գտնվելու մասին է վկայում նաև Ղազար Փարպեցու հետևյալ տեղեկությունը. «Եւ հասեալ յԱղուանս երանելոյ զորավարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից, ազդ եղև զօրագլխացն Պարսից եկբ Հայոց, որոց լուեալ փութացան անցանել ընդ գետն մեծ, զոր Կուր գետն կոչեն և ընդ առաջ եկին նոցա մինչև ի գետոն որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից»<sup>6</sup>:

Ըստ այս տեղեկության՝ Խաղխաղը գտնվում է Աղվանքում, մինչդեռ այն գտնվելիս է եղել Ուտիքում, քանի որ Ուտիքը տարածվել է Կուր գետի աջ ափի երկայնքով:

Այս ժամանակ Արցախի՝ Մարզպանական Հայաստանի սահմաններում գտնվելու մասին է վկայում այն տեղեկությունը, որ Ավարայրից հետո նախարարները ցրվեցին և գտնվում էին «ոմանք երկիրն Խաղտեաց, և այլ բազումք ի կողմանս հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն Տմորեաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արծախոյ, և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնացան ի վերայ բազում ամրոցացն» (Եղ., Զ):

Տարակարծություններ կան այս ժամանակ Փայտակարանի պատկանելության հարցում: Պատմագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Փայտակարան աշխարհը պատկանելիս է եղել Ատրպատակա-

<sup>3</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, Գ-ԿԳ:

<sup>4</sup> Տե՛ս Ե. Արմոց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 280-281:

<sup>5</sup> Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1989, Դ:

<sup>6</sup> «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց», Եր., 1982, ԼԵ:

նին<sup>7</sup>: Սակայն մենք փոքր-ինչ այլ կերպ ենք հասկանում եղիշեի հետևյալ տեղեկությունը. Միհրներսեհը «Հասեալ մերձ ի սահմանս Հայոց, մտանէր ի քաղաքն Փայտակարան» (Եղ., Գ): Այսինքն՝ հասնելով Հայոց սահմաններին մոտ՝ մտնում է Փայտակարան քաղաքը: Այստեղ «սահմաններին մոտ» չի նշանակում, թե Միհրներսեհը չի մտել Հայաստան, այլ պարզապես շարժվելով հարավից հյուսիս, նա հասել է Հայաստանի սահմաններին և ապա անցնելով այն՝ «մտել Փայտակարան քաղաք», որը (դարձյալ ըստ նույն քարտեզի) գտնվում էր Հայաստանի սահմանից բավականին հյուսիս, և այնտեղ հասնելու համար Միհրներսեհը պետք է մոտենար Հայոց սահմաններին: Ուստի կարծում ենք, որ 450 թ. Փայտակարան աշխարհը մտել է Հայոց մարզպանության մեջ:

Բոլորովին այլ է Ղազար Փարպեցու տեղեկությունը: Ըստ նրա՝ «Միհրներսեհ Արեաց հազարապետ եկեալ ի Փայտակարան քաղաք՝ գունդ կազմէ և ընդ Աղուանս արծակէ ի Հայս» (Փարպ., ԼԳ), որից պետք է եզրակացնել, որ Փարպեցու օրոք Փայտակարանն արդեն անջատված էր Հայաստանից: Այսինքն՝ Փայտակարանը Հայաստանից անջատվել է Վարդանանց պատերազմից հետո, և հեղինակը Փայտակարանը համարում է Աղվանքի հարևանությամբ գտնվող մի տարածք: Փայտակարանն ըստ «Աշխարհացոյց»-ի անջատվելով Մեծ Հայքից՝ միացվել է Ատրպատականին<sup>8</sup>:

Մարզպանության հաստատման սկզբնական շրջանում երկրի հյուսիսային սահմանները չունեին այն տեսքը, ինչ Մեծ Հայքի թագավորության ժամանակ: Մարզպանական Հայաստանի հյուսիսային սահմանի վերաբերյալ ևս պատմագիտության մեջ տարակարծություններ կան: Ս. Երեմյանը գտնում է, որ 387 թ. բաժանումից հետո Գուգարքն անցել է Վրաց ենթակայության տակ՝ բացառությամբ Աշոցք գավառի, որը մնաց Հայաստանի կազմում և «Աշխարհացոյց»-ում նշված է իբրև Այրարատ նահանգի գավառներից մեկը<sup>9</sup>: Ս. Երեմյանը նույնացնում է Գուգարք աշխարհի և Գուգարաց բղեշխության սահմանները: Բ. Հարությունյանը Մարզպանական Հայաստանի հյուսիսային սահմանն անցկացնելիս Գուգարքի Տաշիր գավառը թողնում է Հայաստանի սահմանում, իսկ Գուգարաց բղեշխությունը Վիրքին միացված է համարում 387 թվականից<sup>10</sup>:

Ըստ Բ. Հարությունյանի՝ Գուգարքի Կանգարք գավառը, որը նա տեղադրում է Տաշրաց սեպհականությունից հյուսիս<sup>11</sup>, նույնպես անցել է Վրաց տիրապետության տակ: Սակայն, ըստ աղբյուրների՝ Կանգարքը գտնվել է Տաշիրից հարավ՝ «Ապա Տռեղք և Տաշիր (գավառները), իսկ նրանցից հարավ՝ Կանգարք գավառը»<sup>12</sup>:

Կանգարք գավառի՝ Մարզպանական Հայաստանի սահմաններում գտնվելու մասին է վկայում նաև Ղազար Փարպեցու հետևյալ տեղեկությունների համադրումը: Նա հաղորդում է, որ Վրաց Վախթանգ թագավորը գրում է Վահան Մամիկոնյանին, թե «Գունդ սաստիկ եհաս յերկիրս

<sup>7</sup> Տե՛ս Բ. Հ. Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, Եր., 2004, էջ 48-49:

<sup>8</sup> Տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Եր., 1979, էջ 296:

<sup>9</sup> Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 48:

<sup>10</sup> Տե՛ս Բ. Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 46-49:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 42-43:

<sup>12</sup> Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 290:

Վրաց, և իմ տեսեալ, թե ոչ եմ կարող կալ առաջի՝ խոյս տուեալ ի լերինս Յայոց, մօտ ի սահմանակցութեանն Վրաց՝ մնամ ձեզ» (Փարպ., 39): Ըստ այս տեղեկության՝ Վախթանգն ապաստանել է Յայքի տարածքում՝ հայոց լեռներում: Իսկ հաջորդ տեղեկությունը վկայում է, որ Վախթանգի ապաստանած վայրը գտնվում է Կանգարք գավառում. «Եւ զօրավարին Յայոց Վահանայ Մամիկոնէի և ամենայն աւագ տանուտերացն և սեպհացն Յայոց,... անյապաղ ամենայն զօրքն Յայոց առ արքայն Վրաց հասանէին և բանակեալք առ վայր մի գավառին Կանգարաց դադարէին» (Փարպ., 39):

Այսինքն՝ Կանգարք գավառը գտնվում էր Յայոց սահմաններում: Այս է վկայում նաև այն, որ Յայոց իշխաններից ոմանք ճիշտ չեն համարում Յայոց գնդի իջնելը Վիրք՝ «Եւ իշխանացն Յայոց ոմանք ոչ յաջող համարէին զէջո գնդին Յայոց ի Վիրս» (Փարպ., 39): Այս տեղեկությամբ ևս պետք է հասկանալ, որ հայոց զորքը գտնվել է Յայքի սահմաններում, այլապես չէր շեշտվի նրանց՝ Վիրք իջնելու հանգամանքը:

Այսպիսով, Վահանանց պատերազմի օրոք Գուգարքի Կանգարք գավառը գտնվել է Յայոց մարզպանության սահմաններում, թեև նրանից հյուսիս և արևմուտք գտնվող գավառները միացվել էին Վրաց մարզպանությանը: Բայց այս սահմանն էլ անփոփոխ չի մնացել, քանի որ «Աշխարհացոյց»-ը վկայում է, որ Կանգարքը ևս հետագայում միացել է Վիրքին<sup>13</sup>:

Յայոց մարզպանությունը թուլացնելու նպատակով Գուգարքն անջատելու և Վրաց մարզպանությանը միացնելու հանգամանքն ունի իր պատմական հիմնավորումը, որի մասին քանիցս հիշատակում է Մովսես Խորենացին: Ըստ պատմիչի՝ Յայոց Արտաշես թագավորը երկրի զորքը բաժանում է 4 մասի և հյուսիսայինի զորավար է նշանակում Ջարեհին, և «Ջարեհ էր այր սեգ և յորս երէոց նահատակ, իսկ առ պատերազմունս վատ և տաղտուկ, զորոյ զփորձ առեալ Քարծամայ ուրումն արքայի Վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն և կալեալ զՋարեհ, ի բանտի դնէ ի Կաւկաս» (Խոր., Բ-ԾԳ):

Այս տեղեկությամբ պետք է ենթադրել, որ Արտաշես Ա-ի օրոք Վիրքը գտնվել է Մեծ Յայքի կազմում, քանի որ եթե Ջարեհը նաև Վիրքի ռազմական առաջնորդը չլիներ, ապա վրաց ոմն թագավոր Քարծամը, օգտվելով նրա թուլություններից, չէր ապստամբեցնի երկիրը Ջարեհի դեմ: Տվյալ դեպքում վրաց թագավոր Քարծամը կարող էր Վիրքն ապստամբեցնել և ոչ թե Յայքի հյուսիսային շրջանները:

Ըստ Մովսես Խորենացու՝ Վիրքը Յայաստանին միացված է եղել նաև Տրդատ Մեծի օրոք, քանի որ, խոսելով 4 զորավարությունների մասին, հիշատակում է. «Առաջին՝ Բագարատ Ասպետ, զորավար արևմտեան գնդին, երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բղեաշխ Գուգարացոց, սպարապետ հիւսիսային զօրուն...» (Խոր., Գ-Զ): Համաձայն այս տեղեկության՝ Միհրանը համարվում է վրաց առաջնորդ, Գուգարաց բղեշխ և հյուսիսային զորքերի սպարապետ, որից պետք է ենթադրել Վիրքի և Գուգարքի՝ Մեծ Յայքի կազմում մեկ վարչական միավոր լինելը:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

Նույն Միհրանի՝ Վրաց առաջնորդ լինելու մասին Սովսես Խորենացին վկայում է նաև հետևյալ տեղեկություններով. Տրդատը «...Որով պատճառաւ միաբանեալ զամենայն հիւսիսի, հանեալ զօր բազում, զունարտակ արարեալ՝ խաղայ յաշխարհն Պարսից, ի վերայ Շապիոյ որդւոյ Արտաշրի, չորս յիւրոցն առնելով զօրաւարս, զՄիհրան առաջնորդ Վրաց, վստահացեալ վասն ի Քրիստոս հաւատոցն և զԲագարատ ասպետ և զՄանաճիիր նահապետ Ռշտունեաց և զՎահան նահապետ Ամատունեաց» (Խոր., Բ-ՁԵ), ապա, որ Նունեն «զբազում ախտաժեստս բժշկեաց, և զլխովին զկին Միհրանայ առաջնորդին Վրաց» (Խոր., Բ-ՁԶ):

Հայ-վրացական հարաբերությունների մասին հիշատակությունն ունենք նաև Արշակ Բ-ի թագավորության շրջանում: Խորենացին տեղեկացնում է, որ Արշակը Շապուհից խույս էր տալիս. «և նա խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու, Վրաց միաբանելով» (Խոր., Գ-ԻԷ), և «Բայց Արշակայ եկեալ Վրացի գնդաւ՝ ժողովէ զսակաւս և իւր մտերմաց և տայ պատերազմ ընդ նախարարսն» (Խոր., Գ-ԻԹ):

Հայ-վրացական սերտ հարաբերությունների վկայությունն է այն իրողությունը, որ Մեսրոպը հայ գրերի գյուտից հետո տառեր է ստեղծում նաև վրացիների համար<sup>14</sup>, որից հետո կրկին գնում է Վիրք ու Տաշրաց իշխանություն և հետևում այնտեղ ծավալվող կրթության գործին<sup>15</sup>:

Այս տեղեկացնելուց հետո Կորյունը գրում է. «Եւ յանձն արարեալ գնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի... ինքն (Մաշտոցը - Յ. Ռ.), դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց» (Կորիւն, ԺԹ), որից պետք է եզրակացնել, որ Վիրքն ու Տաշրաց իշխանությունն արդեն Մեծ Հայքի սահմաններից դուրս էին գտնվում, քանի որ հյուսիսում ծավալած գործունեությունից հետո Մեսրոպը վերադառնում է «ի կողմանս Հայոց Մեծաց»:

Այսպիսով, տեսնում ենք, որ որոշակի ժամանակահատվածում Վիրքն ու Գուգարաց բղեշխությունը պատմականորեն կապված են եղել միմյանց և նույնիսկ մեկ վարչական միավոր կազմել: Սա էլ հիմք է դարձել Պարսից արքունիքի համար, որ Մեծ Հայքը թուլացնելու նպատակով, նրա հյուսիսային Գուգարք աշխարհը անջատի և միացնի Վիրքին: Մի իրողություն, որը պահպանվել է նաև մարզպանության շրջանում:

Մարզպանական Հայաստանի հարավային սահմանների վերաբերյալ ևս պատմագիտության մեջ տարակարծություններ կան: Ն. Ադոնցն ընդհանրացնելով Պարսկահայք աշխարհի Ջարևանդ և Հեր գավառների մասին տեղեկությունները, եզրակացնում է, որ Պարսկահայք աշխարհը չի մտել Մարզպանական Հայաստանի սահմանների մեջ<sup>16</sup>:

Բ. Հարությունյանը Մարզպանական Հայաստանի սահմաններում է տեղադրում ոչ միայն Հեր և Ջարևանդ գավառների տարածքները, այլև նրանցից հարավ գտնվող որոշ տարածքներ, որոնք պատկանել են Պարսկահայք աշխարհին:

Նկատենք, որ «Աշխարհացոյց»-ը չի նշում, որ Պարսկահայքի գավառներն անջատվել են Մեծ Հայքից և միացվել հարևան երկրին: Ինչ վերաբերում է Հեր և Ջարևանդ գավառների մասին տեղեկություններին, ապա աղբյուրները վկայում են, որ այդ գավառները գտնվել են Հայոց

<sup>14</sup> Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, Եր., 1941, ԺԶ:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, ԺԹ:

<sup>16</sup> Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 254:

աշխարհում. «Եւ յետ բազում աւուրց զօրագլուխն Պարսից խաղայր գայր ամենայն հեթանոսական բազմութեամբն և եկեալ հասանէր յաշխարհն Յայոց ի Յեր և ի Ջարևանդ գաւառ» (Եղ., Ե): Այս մասին է վկայում նաև Վասակ Սյունու նամակը պարսիկներին, որտեղ, խոսելով Յայոց զորքը երեք մասի բաժանելու մասին, նշվում է. «Ջզունդն առաջին հեռացուցի ի կողմանս Յերայ և Ջարևանդայ...» (Եղ., Գ):

Յեր և Ջարևանդ գավառների՝ Յայքի սահմաններում գտնվելու մասին է վկայում նաև Ղազար Փարպեցին՝ նշելով, որ Նիխորին Յայք ուղարկելով, Պարսից Վաղարշ թագավորն ասում է. «Բայց զգոյշ լեր նախ ժողովել առ քեզ այրուծին Ատրպատականի, որ մոտ ի Յայս իցեն, և այրուծին Յեր և Ջարևանդ գաւառի» (Փարպ., 2Ը):

Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ ստորև բերվող տեղեկությունները Յեր և Ջարևանդ գավառների մասին վկայում են, որ այս գավառաանունների հիշատակությունը հիմնականում տրվում է որպես Յայաստանից Պարսկաստան տանող ճանապարհի վրա գտնվող տարածքներ. «Եւ յետ սակաւ ինչ աւուրց անցելոց լուան, եթէ զօր եհաս բազում ի Յեր և ի Ջարևանդ գաւառ» (Փարպ., ԼԸ), ինչպես նաև «...լսէին, թէ զօր բազում խաղացեալ գայ ի Պարսից. եկեալ հասեալ են ի սահմանս Յերայ և Ջարևանդ գաւառի բազում զօրագլուխք» (Փարպ., 3Ա):

Աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Պարսկահայք աշխարհի մասին տեղեկություն ունեն նաև ավելի ուշ շրջանի պատմիչները: Այսպես՝ Թովմա Արծրունին վկայում է, որ Պարսկահայք աշխարհը մտել է Վասպուրականի թագավորության մեջ («Եւ Գուրգէն զկողմանս արևելից յելից Աղբակոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զծեռամբ»<sup>17</sup>) ու հիշատակում է Պարսկահայքի գավառներից Տամբերը, Ըռնան և Ջարեհավանը («Բայց Տամբեր, զԸռնայն և զՋարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց» (Թովմա Արծր., Գ-ԻԹ)), որոնք համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի Տամբեթ, Առնան և Ջարեհավան գավառներին<sup>18</sup>: Այս գավառները գտնվել են Յեր և Ջարևանդ գավառներից հարավ և եթե Յայքի սահմաններից դուրս գտնվեին, չէին հիշատակվի Թովմա Արծրունու կողմից:

Աղբյուրների հիշատակությամբ Պարսկահայքի սահմաններից դուրս է մնացել միայն Նոշիրական բղեշխության տարածքը, որը Պարսից Կավատ արքայի օրոք գտնվելիս է եղել Նինվե նահանգի կազմում: Այսպես՝ «Գիրք թղթոցում» հանդիպում ենք. «...և այլ հաւատացեալ քրիստոնէայք Նոշիրականին ի Նինուէ նահանգ և առ ամենայն եպիսկոպոսունս և ...առ ամենայն հաւատացեալս Պարսից աշխարհի, որ ընդ Կաւատայ արքայից արքայի ընդ իշխանութեամբ էք»<sup>19</sup>:

Այսպիսով՝ պետք է եզրակացնել, որ Պարսկահայքի ոչ միայն Յեր և Ջարևանդ գավառներն են պատկանել Մարզպանական Յայաստանին, այլև նրանից հարավ տարածվածները ևս, բացառությամբ Նոշիրական բղեշխության տարածքի, որոնց հիշատակությունը 5-րդ դարի պատմիչների մոտ բացակայում է թերևս ճանապարհից հեռու գտնվելու պատճառով:

<sup>17</sup> Թովմա Արծրունի և Անանուհ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր., 1985, Գ-ԻԲ:

<sup>18</sup> Տե՛ս Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 294:

<sup>19</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 41:

ռով, մանավանդ որ, ըստ Պևտինգերյան քարտեզի<sup>20</sup>, Պարսկահայք աշխարհի հարավային գավառների վրայով գլխավոր ճանապարհ չի անցել:

Հարավային սահմանի քննության համար կարևոր է նաև Կորճայք աշխարհի՝ Մարզպանական Հայաստանին պատկանելու հարցի ուսումնասիրությունը: Ն. Ադոնցը գտնում է, որ Կորճայքն ամբողջությամբ գտնվել է Մարզպանական Հայաստանի սահմաններից դուրս<sup>21</sup>, սակայն աղբյուրներն այլ բան են վկայում: Եղիշեի վկայությամբ՝ Վասակը «Սոյնպես առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տնորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց» (Եղ., Դ), որից պետք է կարծել, որ Տնորիքն ու Կորդիքը մարզպանական Հայաստանին պատկանող տարածքներ էին: Տնորիքի մասին Եղիշեն հիշատակում է նաև Ավարայրից հետո ծավալված ապստամբական շարժման մասին խոսելիս, երբ նշում է, որ նախարարները ցրվեցին և գտնվում էին «բազումք ի կողմանս հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն՝ Տնորեաց...» (Եղ., Զ):

Տնորիքի՝ Հայոց մարզպանության կազմում գտնվելու մասին է վկայում նաև այն տեղեկությունը, որ Մեծ Հայքում Վարդ Մամիկոնյանի օրոք եղել է Տնորիքի եպիսկոպոսություն. «Ի Մեծաց Հայոց ի Բաբգենայ ի Հայոց եպիսկոպոսապետէ..., ի Ներսեսէ Մարդաբետական եպիսկոպոսէ..., յԱտատեայ Տայոց եպիսկոպոսէ..., ի Դաւթայ Տնորեաց եպիսկոպոսէ... ողջույն...»<sup>22</sup>:

Տնորիքը Խորենացին նույնացնում է Կորդիքի հետ՝ նշելով, որ Սմբատը «Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տնորիս, որ այժմ կոչի Կորդիք» (Խոր., Բ-ԾԳ): Նկատենք նաև, որ «Աշխարհացոյց»-ը չի նշում Կորճայքի՝ Մեծ Հայքից անջատված լինելու մասին, այլ տեղեկացնում է, որ այն «...գտնվում է Մոկքից արևելք և սահմանակից է Ասորեստանին»<sup>23</sup>:

Այսպիսով, պետք է կարծել, որ Կորճայք աշխարհի հիշատակված գավառները պատկանել են Մարզպանական Հայաստանին, իսկ մյուսներն անջատվել են և միացվել Ասորեստանին, քանի որ Վարդանանց պատերազմի նախօրեին գոյություն է ունեցել նաև Կորդուաց աշխարհ, որը գտնվել է Հայաստանից դուրս: Այս է վկայում Եղիշեի տեղեկությունն այն մասին, որ մոզերը հրաման էին առել պարսից արքունիքից մտնել «...որպէս Հայոց աշխարհին, նոյնպէս և Վրաց և Աղուանից և Լփնաց, Աղծնեաց և Կորդուաց և Ծավդէից և Դասն և որ այլ ևս ուրեք ուրեք» աշխարհները (Եղ., Բ):

Այս տեղեկությունից երևում է, որ Աղծնիքը նույնպես դուրս է մնացել Հայոց մարզպանության սահմաններից՝ մի իրողություն, որի մասին Եղիշեն վկայում է, որ Վասակը քանդեց «...զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ, և զաշխարհն Աղծնեաց ըստ նմին օրինակի յետս կալաւ» (Եղ., Դ):

Աղծնիքի՝ Հայաստանից դուրս առանձին վարչական միավոր լինելու մասին է վկայում նաև Դազար Փարպեցին: Ըստ նրա՝ Վասակը նամակներ գրեց «...առ կայսր..., առ բղեաշխն Աղծնեաց և առ իշխանն Անգեղտան, ի Ծոփս և ի Հաշտեանս և յեկեղեաց...» (Փարպ., ԼԳ), որպեսզի

<sup>20</sup> Տե՛ս Բ. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 40-41:

<sup>21</sup> Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 200:

<sup>22</sup> «Գիրք թղթոց», էջ 41-42:

<sup>23</sup> Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 294:

նրանց համախմբի հակապարսկական շարժման մեջ: Հետևաբար, պետք է մտածել, որ այս տարածքները ևս դուրս են գտնվել Մարզպանական Հայաստանի սահմաններից:

Աղձնիքի՝ Մեծ Հայքից անջատվելը պայմանավորված էր ոչ միայն նրա աշխարհագրական դիրքով, որ սահմանամերձ էր Պարսից աշխարհին և նրա տարածքով էր անցնում դեպի Մեծ Հայքի արևմտյան աշխարհներն ընկած ճանապարհը, այլև դրանից բխող՝ Աղձնեաց բղեշխի քաղաքական կողմնորոշմամբ, որն ուղղված է դեպի Պարսից աշխարհը: Այս է վկայում Փավստոս Բուզանդը, երբ նկարագրում է պարսիկների արշավանքի ուղղությունը Աղձնիքից դեպի Մեծ Ծոփք, հետո Անգեղ տուն, Դարանաղի գավառ<sup>24</sup>, ապա պատմում է Աղձնեաց բղեշխի և Աղձնիքի ամբողջ նախարարության՝ Արշակ Բ-ի դեմ ապստամբելու և Պարսից Շապուհ թագավորի կողմն անցնելու մասին<sup>25</sup>:

Մարզպանական Հայաստանի արևմտյան սահմանը միջպետական սահման էր, որը որոշվել էր 387 թ. բաժանմամբ. սահմանագիծն արևմուտքում էր թողնում Բարձր Հայքն ու Ծոփքը, իսկ արևելքում՝ Տայքը, Այրարատը, Տուրուբերանը: Մարզպանական Հայաստանի այս սահմանագծի վերաբերյալ պատմագիտության մեջ տարակարծություններ չկան: Միանշանակ են նաև աղբյուրների տեղեկությունները: Եղիշեի վկայությամբ՝ Վասակը քանդեց «...զմիաբանութիւն աշխարհին Վրաց և Հայոց և Աղուանիցն... և գաշխարհն Աղձնեաց ըստ նմին օրինակի յետս կալալ: Գրեց հրովարտակ և աշխարհին Յունաց... առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնենից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց և հաւատարիմ զօրացն Հռոմոնց ի սահմանին Պարսից» (Եղ., Դ):

Ըստ այս տեղեկության՝ Ստորին Հայքը սահմանակից էր Պարսից երկրին և գտնվում էր Հունաց տիրապետության տակ: Իսկ Ստորին Հայքը համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի Բարձր Հայք աշխարհին:

Ղազար Փարպեցին էլ պարսկա-բյուզանդական սահմանի վերաբերյալ ասում է հետևյալը. «Եւ էր բանակ սաստկութեան զօրուն Արեաց ի գեօղն, ու անուանի Դու, ի սահմանակցութեան Պարսից և Հռոմոնց. և զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան մերձ ի նա իբրև երկուք. հրոսակօք ի գեօղ մի որ կոչի Մկնառիճ» (Փարպ., ՀԵ): Հայտնի է, որ Դուն գտնվում է Այրարատ աշխարհի Բասեն գավառում, իսկ Մկնառիճը՝ Տայքում: Հետևաբար՝ Տայքը գտնվում էր Պարսից բաժնում:

Տայքի՝ Հայոց մարզպանության մեջ գտնվելու մասին է վկայում նաև «Թուրք Հայոց ի Պարսս առ ուղղափառս» փաստաթուղթը, որտեղ նշված «Ի Մեծաց Հայոց ի Բարզենայ ի Հայոց Եպիսկոպոսապետէ... յԱտատեայ Տայոց Եպիսկոպոսէ... ողջոյն»<sup>26</sup> հիշատակությունից իմանում ենք, որ Հայքում եղել է Տայքի եպիսկոպոսություն, իսկ սա էլ նշանակում է, որ Տայքը պատկանել է Հայոց մարզպանությանը:

Չնայած Մարզպանական Հայաստանի սահմանների նման գծագրությանը, այն անփոփոխ չի եղել, այլ ժամանակի ընթացքում ձևափոխվել է: Ասվածի վկայությունն է Սեբեոսի տեղեկությունն այն մասին, որ 571 թ.

<sup>24</sup> Տե՛ս **Բուզանդ**, 4-ԻԴ:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, 4-Ծ:

<sup>26</sup> «Գիրք թղթոց», էջ 41-42:



ապստամբությունից առաջ Սյունիքը դուրս է եկել Հայոց մարզպանության կազմից և ենթարկվել Ատրպատականին. «Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց և խնդրեաց ի Խոսրովայ արքայէն Պարսից, զի տարցեն զդիւանն աշխարհին Սիւնեաց ի Դըւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի՛ ևս կոչեսցէ անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն»<sup>27</sup>:

Սյունիքի անջատվելուց հետո փոփոխություն է կրում նաև Մարզպանական Հայաստանի արևմտյան սահմանը, որը տեղի է ունենում 591 թ. կնքված պարսկա-բյուզանդական նոր համաձայնությամբ: Այս պայմանագրով միջպետական սահմանը տեղափոխվում է արևելք, քանի որ պարսից Խոսրով թագավորը Մորիկ կայսերն է զիջում «...զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստաւան և զԳոգովիտ գաւառ մինչև ցՀաջին և զՄակու: Եվ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային» (Սեբ., ԺԲ):

Այսպես փոքրանում է Մարզպանական Հայաստանի տարածքը՝ ընդգրկելով Վասպուրական գնդի երկիրը և Դվինն իր շրջակա տարածքներով: Մարզպանական Հայաստանի նման սահմանները պահպանվեցին մինչև արաբական առաջին արշավանքները:

Այսպիսով նկատենք, որ Մարզպանական Հայաստանի սահմաններն անընդհատ փոփոխվել են, և միտումը եղել է նրա տարածքի կրճատումը, որը բացատրվում է մի կողմից Պարսից արքունիքի վարած ներքին քաղաքականությամբ, իսկ մյուս կողմից՝ պարսկա-բյուզանդական հարաբերությունների զարգացմամբ:

**РУЗАННА АРУТЮНЯН – *Границы марзпанской Армении.*** – История нашей страны при марзпанах (наместниках персидского шаха) была и остаётся одним из предметов изучения арменистики. Исследуя границы средневековой Армении во времена марзпанов, автор статьи приходит к следующим выводам: во-первых, они часто менялись, и при этом наблюдалась тенденция к их сокращению; во-вторых, эти изменения, с одной стороны, связаны с внутренней политикой Персии, а с другой стороны – с развитием персидско-византийских отношений.

**RUZANNA HARUTYUNYAN – *The borders in the Armenian Marzpanate.*** – The history of the Armenian Marzpanate has been one of the issues in Armenian Studies. The present paper illustrates research into the Armenian borders during the period of Marzpanate.

Having studied the borders in that period, the author has arrived at the conclusion that the borders in the Armenian Marzpanate underwent continuous changes and curtailment, which was conditioned by both Persia's domestic policy and the development of Persian-Byzantine relations.

---

<sup>27</sup> «Պատմութիւն Սեբեոսի», Եր., 2005, գլ. Ը: